

սինը: Հոփսիսմեանք անշուշտ աւանդու-
թիւններ թողած են իրենց ծննդավայրի
մասին և հմայք մը ձգած Հոռոմ անուան
շուրջ. որուն համար կոմիտաս կաթողիկոս
կը նուագէր «կանայք պատուականք քա-
ղաքաւ և ազգաւ» և իրմէ շատ առաջ
Խորենացին՝ նոյն Ս. Կուսանաց ճառին
մէջ կոչելով Ս. Հոփսիսմէն «Ծաղիկ
առաքելական արեամբն Պետրոսի և Պօ-
ղոսի յանդս հոսեալ ոռոգեալ» և թէ
«Պետրոս և Պօղոս, ի սոցա գրկաց լու-
սաւորս այս (Հոփսիսմէ) գտաւ»: Հոռոմ է
որ Խորենացի, կարօտով գլխաւոր ա-
ռաքելոց գերեզմաններուն, զորս երբեմն
համբուրեր էր, իր ամբողջ խանդով կ'ո-
գեկոչէ. «Չայն աւետեաց հնչեցէք յա-
րեմուտս, փող ի Հոռոմ հարէք: Զուար-
ճացիր եւ ուրախ լեր, տիեզերական
մայրաքաղաք, որ նստիս յարեմուտս
առաքելաձահ պատկեալ լուսով աշխար-
հատարած ճառագայթիւք... Ուրախ լեր
և ցնծա՛, հոռովմայեցոց եկեղեցի, մայր
Հոփսիսմեայ»: Յետոյ Խորենացի խօսքը
կը դնէ Ս. Հոփսիսմէի բերանը որ կը
խօսի Հայաստանի. «Ահա հասի քեզ ի
թիկունս, սլացեալ յարեմտից յարեւելս՝
թեթեւընթաց ամպով իմոյ կուսութեանս.

զփայլակնարորը ճառագայթ տիեզերածա-
ւալ լուսոյ աւետարանին իմոյ հարց Պե-
տրոսի և Պօղոսի ի վայրս քո եկի ծա-
գել, վանել փարատել զմէզ խաւարի»:

Այսպիսի բարեպարիշտ սէրն էր ան-
շուշտ որ տարածուած, ծաւալած էր Հա-
յոց մէջ, և հայ ժողովրդեան մէջ Հոռոմ՝
իր ուխտատեղւոյ հանգամանքին մէջ
Պետրոսի և Պօղոսի քարաքի էր փոխուած:

Այդպիսի ուխտաւոր ամուրի մը կը հան-
դիպինք շուրջ Գ դարու կէսին. Կիրեղ և
Հիպերիբիա. վերջինս իգական ձեւն է
մեր մէջ ծանօթ Հիպերիբոս անուան,
ինչպէս յայտնի է Երբուրդ Հայքի Սա-
մուսատ քաղաքի համանուն վկաներէն՝
նահատակուած Գ դարուն սկիզբը Մաք-
սիմիանոսի հալածանքի առեւն:

Այր և կին ուխտի եկած են Հոռոմ և
հոն մնացած, և վախճանած 385 թուա-
կանին, ինչպէս կը ցուցնէ իրենց տա-
պանաքարը՝ որ ներկայիս կը գտնուի
վատիկանեան թանգարանին մէջ և որու
մասին ժամանակին գրած է De Rossi¹
և մեկնարանած զայն չափով մը:

Ահա անոր լատիներէն բնագիրը, որուն
հանդէպ կը դնենք նաեւ հայերէն աշխար-
հաբար թարգմանութիւնը².

A ✠ Ω

CIVEM ARMENIACVM CAPPADOCVM
NVMINE QVIRILLVS PIVS OMNIBVS
AMICATVS VIXIT ANNOS
P·M· LXX PRAECESSIT AD PACEM
VI ID. MART. POST CONSS. RICO
MERE ET CLEARCO DIE LUNAE
BIS·MV CVM YPERECHIAM COMPAREM

Կապաղովկիոյ քաղաքացի հայկազմ
Կիրիկ ամուսն քարեպաշտօն
Ամենուս սիրելի, ապրեցաւ
Շուրջ 70 տարի, զմաց ի համգիստ
Վեց իդ. մարտի (10), յետ ճիւլատմեիրոս
Ռիկոմմերէսի և Կղէարքոսի, երկուշաբթի օրը
Կամզմեց այս շիրիմը իրեն և իր Հիպերիբիա կնոջ

1. «Inscriptiones christianae urbis Romae». հատ. Ա. էջ 155, թ. 355.

2. Արձանագրութիւնը ստորին լատիներէնով է, ուստի և իմաստը մթին:

Ա. տոյն ըլլալու է հաւանօրէն (ինչպէս թարգմանեցինք) Civis armeniacus Cappadoc

Բ. Nomine... Գ. P·M· = առաւել կամ նուագ = շուրջ

Զ. dies lunae = lundi = երկուշաբթի:

Է. սողը անդձուածային է. Bis·mv կարելի է կարդալ B(enemerenti) I(mpenso) S(uo) m(onumen-
tum) v(ovit) = իր ձախքով շիրիմ կանգնեց երախտաւորին (էրկան), Բայց հաւանական է կարծեմ կարդալ՝
Sib(i) փոխանակ Bis ի որով կ'ունենանք. Կիրեղ... կանգնեց այս շիրիմը իրեն և իր կնոջ համար եւն.:

Պալճեան (տե՛ս Պատմ. կաթ. Վրդ. եւն. տղ. Վիեննա, 1878, էջ 5) BIS·MV գիրկմարմիմ թարգմանած է,
չեմ զիտեր ուսկից և ինչպէս:

Աւելցնենք թէ թուականը 385 է իրացնէ, վասն զի այդ թուին է որ Richomeres և Clearchus հուպատոս
էին: Իսկ հայազն ամուրը հաւանօրէն Միլիտինէն էր, քանի որ Կապաղովկիոյ այդ մասն էր զոր Տրոյանոս միա-
ցուցած էր երբեմն Փոքր Հայքի: (Հմմտ. Պրոկոպ. եւն.):